# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք.Ճամբարակ, (0265)22255, chambarak.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024թվականի N 1157-Ա

ԱՐՄԵՆՈՒՀԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ, ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, հաշվի առնելով, որ ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ծափաթաղ բնակավայրի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել 2-րդ փողոց, թիվ 20 հասցեում գտնվող 0.1 հա մակերեսով հողամասի գծային չափերը,երկրաչափական պատկերը և մակերեսը, ինչպես նաև հաշվի առնելով, որ հողամասի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան.

## Ո Ր Ո Շ Ու Մ Ե Մ՝

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ համայնքի Ծափաթաղ բնակավայրի 2-րդ փողոց, թիվ 20 հասցեում գտնվող 0.1 հա մակերեսով հողամասի գծային չափերի և երկրաչափական պատկերի փոփոխությունը ճանաչել օրինական՝ համաձայն կատարված ուղղումների՝ պահպանելով հողամասի 0.1 հա մակերեսը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից ներկայացրած չափագրման արդյունքները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**Համայնքի ղեկավար՝** **ՎԱԶԳԵՆ ԱԴԱՄՅԱՆ**

2024 թ. սեպտեմբերի 24

ք.Ճամբարակ